

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Ֆր.

Վեցամսեայ 6 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀԱՆՆ

Երկու քիւրակի ծրարով
Տարեկան . . . 12 Ֆր.


Վեցամսեայ . . . 7 Ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոյար
Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԹՈՆ

Մանուկնսն առողջ
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԻ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

ИРАВУНКЪ

ВАРНА

Գրութիւնք նոյն տրուի

ՅԱՆՈՐ Կ. ՀՃԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Կը վաճառէ Սօֆիա քաղաքի
վիճակահանութեան տոմսերը .

Գին՝ 1/4ը 3 ֆր. 1/8ը 1.50

ՄԵՐ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԸ

Պուլկարահայ մամուլի միջոցաւ
չափ անգամներ խորհուրդ տրու-
ած ըլլալուն և զանազան առիթ-
ներու մէջ անձամբ խորատած ու
յորդորած լինելուն հակառակ
տարիներէ ի վեր տակաւին կը
յաւառին Պուլկարիոյ հայ դե-
րասանները իրենց ուժերը բա-
ժան բաժան պահելու մէջ .

Մեր ունեցած այդ մէկ քանի
դերասանները որոնք իրարու մօտ
գալով հազիւ միջակ խումբ մը
պիտի կրնային կազմել, իւրա-
քանչիւրը զատ գլուխ քաշելով,
3—4 խումբի բաժնուած, բոլորն
ալ անկատար և անգոհացուցիչ
թատերաբեմին կոչուիմ, բարոյա-
կան բարձրութիւնը ցածցնելու
կը ծառային փոխանակ բարձրա-
ցնելու . Այս բաժան բաժան ե-
ղած խմբակներու պետերն ալ կը
խոստովանին թէ լուրջ տրամ մը
ներկայացնելու ուժ չունին իրենց
խումբը առանձինն, բայց անոնք
ամեն վարպետութիւն կը գոր-
ծածեն, բացի Պ. Պապանանէ, որ
Պուլկարահայ մամուլը զիրենք
փառաբանէ, կարծես իրենց հետ
միատեղ խմբագիրներն ալ ծի-
ծաղելի ընելու միատուութեամբ
անոնք կուզեն որ թերթերու մէջ
իրենց համար գովեստներ կար-
գացուին . Եթէ խմբագիրները
չը գրեն, անոնք կերթան անոնց
բաժանորդներուն ու բարեկամ-
ներուն հաճոյակատարութիւններ
ընելու, մինչեւ որ յաջողին գոնէ
ասոնց ստորագրութեամբ գովա-
բանականներ զրկել թերթին .

Բայց, պարոն դերասաններ,
ատոնք խեղճ միջոցներ են, լուրջ
և դատողութեան տէր մարդիկ
կը խնդան, կարգադատին ձեր
խեղճութեան վրայ . Դուք փո-
խանակ կովը սնուցանելով անոր

կաթէն սնանելու, ելած էք զայն
մորթելու . դուք պէտք է հայ
թատերաբեմը իր կոչումին հա-
մաձայն բարձրացնէք, որպէսզի
դուք ալ բարոյապէս բարձրա-
նաք և ներթապէս վարձատրու-
ւիք . Հայ թատերաբեմը կուրծ-
քերը ու սրունքները մերկ
կիններ ցուցադրելու, «եռա-
սը թիէիզինէ ույմազ» քիշ-
լանսքներ ժողովուրդին հը-
րամցնելու, անիմաստ և անճոռ-
նի կատակախոյր ու լկտի պա-
րեր ներկայացնելու համար չէ
եղած . Վարդուխանի, Աբամեա-
նի, Մնակեանի ու Փասուխան-
եանի հայ թատրոնը ժամանակ մը
տանջելէ յետոյ այսօր ալ սպան-
նելու էք սկսեր . Խղճահարուե-
ցէ՛ք .

Պարոն դերասաններ, եթէ հայ
թատերախումբի անունով հայ
բեմին համար ձեր գոյութիւնը
պահել կուզէք, անհրաժեշտ պա-
հանջ է որ իրարու հետ միանաք,
որպէսզի կարելի ըլլայ ձեր ամե-
նը մէկ առած հայ թատերախումբ
մը կազմել, խումբ ըստելու ար-
ժանի . Իսկ եթէ դերասանական
արուեստը հոգիտութեան և հայ
թատերաբեմը փաղքութեանց
ժամագրավայրի վերածել կուզէք
ձեր առօրեայ ապրուստը ճարե-
լու համար, իրաւունք չունիք հայ
թատերաբեմի անունով խօսելու
և իբրեւ այն ներկայանալու օ-
տարներուն . որովհետեւ դուք
այդպէս վարուելով ամենավատ
գաղափար մը կուտաք անոնց հայ
մտքին, հայ զարգացումին և
հայ թատերաբեմի մասին . Կը
վերագառնանք այս խնդրոյն .

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՌՈՒՍԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ

Ռուսիան Մայր Արեւելքի դժ-
բաղդ պատերազմին մղողը գըլ-
խաւորապէս Գերմանիան ըլլա-
լով հանդերձ այսօր ռուսական
նոր փոխառութեան մը գէժ կը
գոցէ իր դրամատունները, մինչ-
դեռ անցեալ տարի կարծեմ
սեպտեմբերին, երբ պատերազ-

մը կը շարունակուէր, Գերման-
իան ռուսական փոխառութեան
մը առջեւ իր դրամարկները
բացաւ . Ինչու այսօր անիկայ
կը մերժէ Ռուսիոյ դրամ տալ,
երբ այլեւ պատերազմի վտանգը
անցած և ներքին յեղափոխու-
թիւնն ալ երկար ժամանակի մը
համար զսպուած ըլլալ կը թուի .

Այս հարցումին կը պատաս-
խանուի, թէ Գերմանիա Ալէքսի-
րասի համաժողովին մէջ Ռուսիոյ
դէպի Ֆրանսա բռնած դիրքէն
համոզուեցաւ, թէ Ֆրանսոս-ռուս
դաշնակցութիւնը իր կարծածէն
չափ աւելի զօրաւոր է և Ռուսիա
Ֆրանսական ձգտումներուն համա-
պատասխան արտաքին քաղաքա-
կանութիւն մը ընդգրկած է . այժմ
մինչդեռ երբ ռուսո-ճարձի պա-
տերազմը կը շարունակուէր գեր-
ման դիւանագէտները յոյս ու-
նէին թէ կարգ մը հաճոյակա-
տարութիւններ ընելով պիտի
յաջողին Ֆրանսան զրկել իր դաշ-
նակից Ռուսիանէ և այս վերջինը
բարեկամացնել Գերմանիոյ . ա-
նոնց այդ յոյսին դատարկութիւ-
նը յայտնուեցաւ Մարքի խնդ-
րով, յորում տեսնուեցաւ հաւ-
թէ Գերմանիա իր զինակից Ի-
տալիոյ վրայ ալ մեծ յոյս չպի-
տի կրնայ դնել .

(ԹԻՒՐԻՒՄ)

Դեռ քանի մը օր առաջ եւրո-
պական թերթերը և հեռագրի-
ներ կը հաղորդէին թէ Իտալիա
մտադիր է Ալէքսիւրասի Մարք-
եան ժողովէն յետոյ, նոր դեռ-
պանաժողով մը առաջարկել մեծ
պետութեանց, Եւրոպական Թա-
րապուլուսի մէջ իրեն բացառիկ
գիրք մը և մենաշնորհներ ապա-
հովելու նպատակաւ, անշուշտ ի
ֆրանս Սուլթան Համիտի գերիշ-
խանութեան, քանի որ սա է բա-
ցարձակ վեհապետը Ափրիկէի
այդ մասին . Բայց այս լուրին
հակասական կը թուի Կ. Պոլսէն
Թաւին հաղորդուած հետեւեալ
հեռագրի պարունակութիւնը .

« Պոլիս 4 ապրիլ — Իտալիոյ
դեսպանն Սուլթանին մատուց

Ս. Մարիսի և Ղուգարի և Իտալիոյ
քաղին մեծ շքանշանները կայ-
սերական իշխաններուն համար,
և թագաւորական իշխանագուն-
ներու լուսանկարները ադաման-
դազարդ շրջանակներու մէջ զե-
տեղուած . Ունկնդրութիւնէն և
ընթրիքէն յետոյ՝ որուն մասնա-
կցեցան մեծ եպարքոսը և բոլոր
նախարարները, Սուլթանը ցոյց
տուաւ այն արաբական ձիերը
զորս թագաւորին և իշխաններուն
նուիրելու յատկացուցած է .

Երկու արքունիքներու միեմ-
աին նուէրներով զիրար պատու-
ւելը միթէ արդեւք կրնայ ըլլալ
Իտալիոյ Կաթինեան թրագուլուսի
մասին սնուցած նպատակներուն .

ՄԵՐ ԲԱՆԱԿՈՒԻՆԵՐԸ

Ապահովարար, ամեն անոնք որ
հետեւած են մեր արտասահմանեան
հայ յրազրութեան, անշուշտ շատ ան-
գամ ականատես կ'ըսեն անպատմական,
բանասիրական, գրական, կուսակցա-
կան եւ կամ այլ կարգի շատ մը
խնդիրներու վրայ տեղի ունեցած
բանակոխներու .

Ո՞վ կրնայ ռուսալ կամ ժխտել
թէ՝ արդար, ուղղամիտ եւ դուռ դա-
ղափարական հոգի վրայ բանակոխ-
ները եւ քննադատութիւնները ազ-
գերու սխալ հասկացողութեան եւ
գէպի իրերը, դէպի երեւոյթները ու-
նեցած կոյր ըմբռնումին կաշկանդիչ
կապերը խորտակելու գործին մէջ
մեծ դեր չեն կատարած . Անշուշտ ոչ
ոք .

Իսկ այն համայնքները որոնք զի-
րենք առաջնորդող գործիչներէն սը-
տուիւն, կեղծիք եւ անիրաւութիւն
միայն կրցած են ըմբռնել երբեք,
բացարձակապէս երբեք, չեն կրնար
հասնիլ մտաւորական այն բարձրու-
թեան, ուրկէ կարենան ըմբռնել եւ
առնել իրերը այնպէս, ինչպէս որ են,
եւ ինչպէս որ պէտք է առնուին .
Բայց կուսակցութեան, թէ մեր մէջ ե-
ղած քննադատութիւնները եւ բա-
նակոխները մեծագոյն մասամբ ար-
դար ու գաղափարական չըլլալէ զատ,
անձնական եւ շահագիտական եղած
են .

Վեր առէք դուք այսօր մեր լուրջ
եւ զուտ մասնագիտական համարուող
հանդէսներէն մինը, հոն պիտի տես-

նէք որ փրօթէսօր տնտեսական պատմագիր մը, բանասիրական խնդրի մը մասին վէճ ունի ուրիշ բանասէրի մը հետ, եթէ դուք ուշի ուշով հետեւէիք այդ վէճին եւ երկուստէք եղած բանակրեւները լաւ մը քննութեան բովէն անցնէք, պիտի համոզուէիք որ, բուն էական կէտը, այսինքն վիճաբանութեան առարկայ եղող խնդրերը, որ պէտք էր վէճին նիւթը կազմէր եւ որուն վրայ միայն պէտք էր մղուէր կռիւը, մէկ կողմ թողուած է, եւ միայն անձնական հակառակութիւնն է որ կը տիրապետէ հին և նա շատ գիտեմ գուն քիչ գիտեսի կռիւն է որ սկսուած է ։

Իսկ գաղափարականութիւնը, ան երթայ բարով ։

Յեղափոխական թերթերու մէջ մըղուած պայքարներն ալ, շատ անգամ ազգային էական հարցեր չօչափելէ շատ հեռի են ։ Երբեմն ազգային շահը տեղի տուած է կուսակցական տնտեսաբանութեան, հանրայինը եղած է կուսակցական կամ անհատական ։

Մեր այս վերի բաժնիքը հաստատուելու համար ուրիշ օրինակներ չեն որ կը պակսին մեզի՝ բայց մենք չենք ուզում «Իրաւունք»ի պատ. ընթերցողներուն այդ կարգի հինգած պատմութիւններով տաղտուկ պատճառել կը բաւէ միայն «Իրաւունք»ի 15րդ. թւի «հրապարակագիրները» խորագրով նախաօրուածը կարծաւ համոզուելու համար թէ՛ մեր մէջ այդ տեսակ քննադատներ կան, որոնք իրենց անձնական շահուն համար ծունկի կուգան ասոր անոր առջեւ, եւ որոնք ինչպէս նոյն նախաօրուածի մէջ գիտել տրուած էր՝ բնաւ պէտք չէր որ մուտք ունենային եւ ունենան մեր մամուլի մէջ, բնաւ պէտք չէ որ այդ կարգի պատմութիւններու, վարձապետներու եւ նոյնանման շահամու գրողներու քննադատութիւններուն տեղ տրուէր հայ լրագրութեան մէջ ։

Մամուլը սուրբ է եւ սակները պէտք է որ ըլլան անշահախնդիր, արդարակորով եւ իրաւախոհ ։

Կ. Բ.

26 մարտ 1906
Ռուստուգ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՅ-ԹՈՒՐԿԱՆ

ՀԱՄԱԺՈՂՈՒԻ ՄԱՍԻՆ

Հայ-թուրքական համագումարի մասին «Գանձիւն» վրաց թերթին կարծիքը ։

«Վերջացաւ հայ-թուրքական համաժողովը, որի նպատակն էր՝ հաշտութիւն գցել երկու թշնամացրած ազգութիւնների մէջ ։ Իշխանութիւնը, հրաւիրելով այդ ազգութիւնների ներկայացուցիչներին, խոստովանեց, որ ինքն անկարող է արեւհեղութեան առաջն առնել եւ անհնա հարկաւոր համարեց շահագրգռած կողմերի կարծիքներն իմանալ այն միջոցների մասին, որ կարելու են այդ՝ ամեն կողմից ամօթալի՝ արեւհեղութեանը վերջ տալու համար ։ Այսպիսով իշխանութեան միտքը պարզ է. նա շատ լաւ զգում է իր մեղաւորութիւնը այս գործում, գիտէ որ իրան մեղադրում են բնականութեան մի մասը միւսի դէմ գրգռելու մէջ ։ Մի քանի օր նոր չէ նրա համար ։ Եթէ հարցն այսպէս չբարդէր եւ հայ-թուրքական ընդհարումները

ներկայ սուր կեցարանը չընդունէին, պարզ է, որ իշխանութիւնը մատմատին չէր խփել, բայց ընդհարումը ըզզալի եղաւ պետական գանձարանի համար, միլիոնների կորուստ տալով նրան. եւ անհնա այժմ աշխատում է ուղղել իր սխալը, բայց քանի որ անձեռնհաս է, ժողովրդի աջակցութեան է դիմում ։ Մենք սրանով ենք բացատրում հայ-թուրքական համագումարի հրաւիրելը ։ Ուշադրութիւն դարձրի՛նք արդեօք այս հանգամանքի վրայ պատգամաւորները, մեզ յայտնի չէ ։ Մենք միայն գիտենք, որ նրանք ներկայացան իշխանութեան, յայտնեցին իրանց կարծիքը եւ դրանով վստահութեան քէ տւին նրան ։ Ջարմանայի էր եւ այն. որ պատգամաւորները միաժամանակ եւ մեղադրում էին իշխանութեան եւ գովաբանում նրան ։ Մենք չենք յիշել մի քանի պատգամաւորների, օրինակ Պ. Խատիսովին. որոնք փառաւորեցին թէ իրանց եւ թէ կուսակցութեան անունը, այդ հեռու կը տանէր մեզ. վերջապէս այդ այնքան էլ հիտաբերի չէ ։ Ուշեղ իշխանութիւնը, զօրեղ կառավարութիւն, խիստ միջոցներ— անա ինչ էր լուում համաժողովի նիստերին ։ Այս բոլորն ի հարկէ լաւ է եւ անհրաժեշտ բարձրական դասակարգերի համար ։ Բայց նրանք մոռանում էին, որ այդքան բաւական չէ ։ Եւ այդ հասկանալու համար պէտք չէր հեռու գնալ, հէնց իրանց դրութիւնը շատ բան կատէր նրանց. օրինակ՝ ինչ նշանակութիւն ունին նրանց խորհրդակցութիւնները, երբ գրչի մի հասարակ շարժումով կարելի է նրանց բոլոր խօսածները քամուն տալ ։ Այդ մասին ոչ ոք նրանցից մի խօսք անգամ չառաց եւ մտքով ալ չանցկացրեց, որ ջուր է ծծում ։

Մենք հատուում ենք, որ միայն ժողովրդի իսկական ներկայացուցիչները կարող են վերջ դնել այս բոլոր շարագործութիւններին եւ այն էլ միայն այն ժամանակ, երբ ժողովրդի իսկական ներկայացուցիչների խօսքն ու ձայնը ոյժ կունենան եւ կախած չեն լինի ուրիշ ցանկութիւնից ։

Համաժողովը փակեց ընդհանուր ծափահարութեամբ եւ այն յուսով, որ այսուհետեւ վերջ կը տրւի թշնամութեան եւ խաղաղութիւն հաստատուի ։ Երանի այդպէս լինի ։ Թուրքերի եւ հայերի այդ թշնամութիւնը, որ այնքան անմեղ արեւան պատճառ դարձաւ, մեծապէս արգելք հանդիսացաւ մեզանում ժողովրդական շարժման ։ Այս պատճառով ոչ ոք այնքան համակրութեամբ չի վերաբերուի այդ անմիտ թշնամութեան վերջանալուն, որքան մենք ։ Բայց մենք չենք հաւատում որ այդ բանը ընդունակ լինի անելու իշխանութիւնը ։ Կայ միայն մի ոյժ, մի հնար վերջ դնելու այդ արեւհեղութեան եւ այդ տեղի կուենայ այն ժամանակ, երբ երկու կուող ազգերի բանւորները կը միանան եւ միասին պատերազմ կը յայտարարեն իրանց թաւանող բուրժուաներին եւ կալածատէրերին ։ Մեզ կասեն, որ դա ապագայի գործ է. այո՛, բայց այսօր էլ մենք տեսնում ենք նրա արշալոյսը ։

«ԱՐՇԱԼՈՅՍ»

ՊԱՌՈՒԻ ՀԱՅ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ

Պագուէ կը հաղորդեն թէ Հ. Յ. Դաշնակցութեան տեղական Կ. կեդրոնական կոմիտէն որոշեւ երբեք եւ ոչ մէկ կերպով չը մասնակցի Պետական Տումայի ընտրութիւններուն ։

սա պատճառաբանութեամբ. թէ «սամկափար հանրապետութիւնն է միայն, որ աշխատաւոր դասակարգին ապահովելու է նրանց շահերի նորմալ պաշտպանութիւնը» եւ թէ «բռնակալութեան նախագիծ այդ Տումայն միայն նոր չարիքների աղբիւր է լինելու» ։

Պագուէ եւ Երեւանի Հնչակեան մասնաճիւղերը եւս ինքզինքնին հակադաշնական Սոսիալիսթ հոշակելով կառավարութեան դէմ նոր կռիւ յայտարարած են ։

Հայկական դատին համար հիմնուած հայ ժողովուրդի անունով կազմակերպուած այդ երկու կուսակցութիւններու այս նոր յայտարարութիւնները արդեօք նոր հալածանքներու պատճառ չեն ըլլար, արդեօք կրկին թաթարներու եւ կառավարութեան Հայոց դէմ զինակցելու առիթ չեն ընծայեր. արդեօք անցեալ տարուան Պագուէի աղէտներուն ի վնաս հայոց կրկնութիւնը չեն արդարացներ ։ Մեր կարծիքով թէ Դաշնակցութեան կոմիտէին եւ թէ Հընչակեան մասնաճիւղերուն այդ նոր յայտարարութիւնները ամբողջ հայութեան եւ ի մասնաւորի կովկասի Հայոց միտին վտանգաւոր հետեւանքներ ունենալու սահմանուած են, եւ երբեք նպատակաւորմար չեն հայ ազգի ապահովութեան եւ շահերուն տեսակէտով ։

Լ Ո Ւ Ր Ե Ր

Նիժեգորոգեան գնդի հրամանատարը Գանձակից հեռագրում է. «Գանձակ գաւառի 5-րդ մասի հայ զինվորի զինաթափման միջոցին, զիմուսները եւ յորդորները ցանկալի հետեւանքի չը հասցրին. միայն Չարգախուր վիւղի վրայ արձակած 8 հոռմըրը ոտիպիցին յանձնել 200 հրացան, 7 թնդանօթ, 1 գերի թուրք եւ 2 փախստական զինւոր ։

«Այժմ Չարգախուր գիւղի թուրքերի եւ Գետաթէկ գիւղի հայերի համար մուտքը ազատ է ։ Նոյն գաւառամասի թուրքերը յանձնել են 300 հրացան» ։

Թող ընթերցողը չմոռանայ, որ Չարգախուր գիւղը միայն իր գէնքին ապաւինած կարողացաւ դիմադրել թուրքերի գործած բազմաթիւ յարձակումներին, որպէսզի ազատուելով թուրքերի արշաւանքներից, ենթարկուի ուրաւ կոծութեան ։

Մարտի 2-ին Շխլեար գիւղի թուրքերը յարձակեցին Նախիջեան գաւառի Գետաթէկ եւ Գեթաթ գիւղերի բնակիչ Գրիգոր Մահտէսի Գեդաբեանի, Մատթէոսեանի, եւ Չանգեղուր գաւառի Փոնաւուտ գիւղի բնակիչ Բուրգաղեանի վրայ ։ Առաջին երկուսը անհետ կորած են, իսկ երրորդը, փախչելով ազատուելու ։ Միեւնոյն օրը նոյն Շխլեար եւ ուրիշ հարեւան գիւղերի թուրքերը յարձակեցին նոյն գաւառի Աւլաւտի հայ գիւղի վրայ, սպանեցին Նախի Մովսէսեանին եւ ծանր վիրաւորեցին ուրիշ 5 հայի ։ Աւելի քան 50 սպառազինւած թուրքեր յարձակեցին եւ տարան Շխաուու գիւղի տաւարը ։ Շխաուուցիները կրակ բաց անելով չարագործներին վրայ 15 զլուխ տաւար յետ խլեցին ։

«ԱՐՇԱԼՈՅՍ»

Դանձակ, մարտի 16 ին ։ Թուրքական մասում անհետ կորած Արտեմը չէ գտնուած ։ Բաջալեւում թուրքերը,

այսօր, Թոփալ-Հասանլի մօտ յարձակեցին 8 հայ սայապանների վրայ ։ Ներանցից միայն մէկը ազատեց քաղաքում ։ Միւս 7 ի վրձակը յայտնի չէ ։ Հէնց այսօր եւս Գրիգորայ ժամը 6-ին, Ֆլէյլէրի տան մօտ թուրքերը բռնեցին մի հայի ։ Սակայն հայը ազատուեց, շնորհիւ սպայ Գորչկովի եւ երեք զինւորների օգնութեան ։

Շուշի—Մարտի 13 ին Շէխլի գիւղը, առանց մի որ եւէ առիթ հայերի կողմից, ենթարկեց յարձակման եւ թայանի ։ Եարձակողներն էին 40 կողակ 10 զինւած թուրք, մօլլան, Թափրիխ տանուտէրը՝ հաշտարար միջնորդ Երմօլայիւղի եւ պրիստաւի օգնական Ֆադնի ղեկավարութեամբ ։ Թափրիխի ցուցմունքով ծծւած է գիւղացի Պօղոսը եւ տարւած է կարաբուլաղ ։ Խուզարկութիւն են կատարել. բռնել են մի հրացան ։ Քիչիւ-տարել են 8 զլուխ տաւար ։ յափշտակել են գորգեր, արծաթէ գօտիներ, երեք կարաս օղի, շատ արծէքաւոր իրեր ։ Վնասներն անգին են ։ Կարդացել են այն մարդկանց ցուցակը, որոնք ձերբակալուելու են ։ Կողակները հեռացել են հարաւ գրութեան մէջ ։

Հեռանալիս Ֆանդը յայտարարել է որ նոյն վրձակին են ենթարկել նաեւ միւս հայաբնակ գիւղերը ։ Ժողովուրդի մէջ մեծ վրդովմունք է տիրում Նրմօլայի վրէժ ։


ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու կեդրոնական կառավարութեան կազմութեան մասին հետեւեալ շահեկան տեղեկութիւնները կուտայ Տօք. Հ. Ս. Ճէլաւեան «Չայն Հայրենեաց»ի մէջ ։

Ամերիկեան կառավարութիւնը իր կազմութեամբ դաշնակցական է եւ իր օրէնսդրութեամբ եռապետութիւն է ։ Գաշնակցական է քանզի, կեդրոնական կառավարութիւնը 45 գերիխան նահանգներու կողմանէ պատուիրակեալ իշխանութիւն մ'է ։ Եւ եռապետութիւն է, քանզի այս դաշնակցական կառավարութիւնը երեք իրարու համընկնող մասերէ կը բաղկանայ ։ Ա. Գործադրիչ մասը, որ նախագահէն եւ իր դահլիճէն կը կազմուի, Բ. Դատական մասը, որ Գերագոյն Ատեանն է, Գ. Օրէնսդրական մասը, որ է Դոնկրէսը ։ Դոնկրէսը զարմեալ երկու սենեակներէ կը բաղկանայ, որոց մին է Երեւոյսականական Ժողովը իսկ միւսն է Մերակոյտը ։ Այս է կեդրոնական կառավարութիւնը իր կազմութեամբ, եւ այս երեք մասերը իրենց օրէնսդրութեան եւ օրինաց գործադրութեան մէջ բացարձակապէս հպատակ են Ազգային Սահմանադրութեան արամադրութեանց ։ Սահմանադրութիւնը այս երկրին քաղաքական Աւետարանն է, քան զոր բարձրագոյն հեղինակութիւն չկրնար ըլլալ պետական նաւին վրայ հսկելու ։ Նախագահը օրէնք չկրնար քուէարկել այլ միայն իրնայ գործադրել այն օրէնքները, զորս քուէարկելու պաշտօնը Դոնկրէսին միայն տրուած է Սահմանադրութեամբ ։ Գերագոյն Ատեանը ոչ օրէնք կրնայ քուէարկել, ոչ ալ օրէնք գործադրել ։ Անոր պաշտօնն է հսկել մէկ կողմէ Դոնկրէսին իսկ միւս կողմէ Նախագահին վրայ, եւ հոգ տանի որ քուէարկուած եւ գործադրուած օրէնք-

ները Սահմանադրութեան ոգւոյն համաձայն ըլլան : Սահմանադրութեան հեղինակները այս սեղմումները հաստատեցին , որպէսզի կառավարութեան մէկ մասը իրեն յատուկ սահմաններէն անցնելով միւս երկուքը չկապտէ իրենց յատուկ առանձնաշնորհումներէն : Զօրճ Ուաշինկթոն, ինչպէս նաեւ Արքահայր Լինքոլն իրենց ատենին յօտարութեամբ հպատակեցան այս հարկաւոր սեղմումներուն , քանզի անոնց մէջ կը տեսնէին միայն Ամերիկեան Ազգին փրկութեան եւ ապահովութեան երաշխաւորութիւնը : Քօնկրէսի կազմութեան սա եւս աւելցնեմ թէ, Երեսփոխանական Ժողովին անդամք կընտրուին ժողովուրդային քուէարկութեամբ երկու տարին անգամ մը : Իսկ ծերակոյտին անդամները միայն այլ եւ այլ նահանգներու կառավարութեանց կողմէ Ուաշինկթոն կը զրկուին՝ իրեն զեպաններ կեդրոնական կառավարութեան մօտ : Ամէն նահանգ մեծ թէ փոքր երկու ծերակոյտական կը զրկէ Ուաշինկթոն : Երեսփոխանական Ժողովը իր գործունէութեան մէջ Երակոյտին պաշտօնէն ուրիշ բնոյթ մը ունի , եւ այս երկու ժողովներուն պաշտօնները մասնամասնօրէն տրամադրուած են Սահմանադրութեան մէջ : Երեսփոխանական Ժողովը յաւէտ պետական եկամուտի, մարտի, ծախքերու եւ պիւտճէի խնդիրներով կը զբաղի, եւ իր որոշումները պարտին ծերակոյտին : Կողմանէ վաւերացուի՝ ու օրէնք ըլլալէ առաջ Նախագահին կողմանէ ստորագրուի : Երեսփոխանական Ժողովը Նախագահին հետ սերտ եւ անմիջական կապակցութիւն չունի : Երակոյտն է որ աւելի տիրական հեղինակութիւն ունի Նախագահին արարքներուն վրայ : Նախագահն տմենաբարձրէն ցլետին պաշտօնական կրնայ անուանել ծերակոյտին վաւերացմամբ : Ասկէ զատ Նախագահը որ եւ է օտար տէրութեան մը հետ դաշնագիր չկրնար կնքել, կամ որեւէ նոր կառավարութեան մը ճանաչում տալ բայց միայն Երակոյտին «խրատով եւ հաւանութեամբ» : Երակոյտին կողմանէ այսպէս չվաւերացուած որ եւէ դաշնագիր անսահմանադրական է եւ զուրկ կապիչ զօրութենէ :

ՄՈՍԿՈՒԱԻ ԴՐԱՄԱՏԱՆ ԿՈՂՈՊՏՈՒՄԸ



Մոսկւա, 10 մարտ

Մոսկւայի Փփաղարձ Վարկի Ընկ. քանկը կողպտուելու մանրամասները այսպէս են լուում .

Բանկը ներս խուժողներ թիւը եղել է 25 ի չափ : Կարծուում է որ մէջները եղել են լեհեր ու լատիներ. ծառայողներ զանգով՝ նրանք աւելի արեւելցու տիպ ունէին, քան ոսի, եւ թէ նրանցից մի քանիք վերջին ամուսնայ ընթացքում, համարեա ամեն օր էին երեւում քանկում : Հետեւապէս, նրանք թէ քանկն են լաւ ուսումնասիրել ու թէ զրոտմը իրանցից պահպաններ ունեցել՝ այնպէս որ երբ կողպտող հրոսակը քանկն է խուժել, զրքից իսկոյն ցած են թողել լուսամուտներին երկաթի վարագոյրները : Մտնելիս էլ երկու խմբերի քաժանւած են մտել երկու դռնից : Այդ միջոցին քանկում արտէլ՝ ծառայողներին հետ միասին բոլոր ծառայողներ թիւը 100 ի է եղել հասնելիս

նրանց թուում եւ ծպտուած քաղաքապահներ : Նիրա մտնելու պէս հեռախօսի թիւերը կտրել են :

Իսկոյն կողպտողներ չգլխաւորը՝ հրամայել է «Տեղներիցը չշարժուէք ու ձեռքներդ վեր բարձրացրէք, մենք ուղմեր ունենք» : Այդպէս էլ արել են ամէնքը : Միայն ծերուկի մէկը, կարծեմ, կասսիր Լազարէվը . չկարենալով երկար ժամանակ մնալ այդ դրութեան մէջ, ձեռքերը ցած է թողել, — իսկոյն նրա կողմն են ուղղել ատրճանակի փողը : Իսկ երբ նա պատճառաբանել , որ ձեռքերը բարձր պահելու էլ ոյժ չունի, վրան պահապան են կարգել, անցել իրենց գործին :

Եկողները հետները բերած են եղել մի քանի քսակներ . որոնց մէջ տեղաւորել են միայն ոսկի դրամները — 875,000 ռ. : Նրանք շատ շտապ են եղել կատարելիս իրանց կողպտուել : Մանր թղթադրամներն ձեռք չեն տուել, նոյնպէս եւ 23 միլիոն տոկոսաբեր թղթերն, իսկ 500 տուրիանցները պահաններն են ճխտել, 50 հազար բուրձու գումարի : Հետեւը բերած հինգ ուղմերից երեքը թողել են քանկում, պատուիրելով ծառայողներին, որ ձեռք չտան, այլ թողնեն ոստիկանութեանը . որին նրանք՝ ուղմերը, կը պատասխանեն :


Մինչդեռ կողպտողներեց շատերը, ինչպէս եւ ծառայողները, զողալիս են եղել «գլխաւորը» գործելիս է եղել շատ հանդարտ, անվրդով կարգապահութեամբ : Ուղմեր գումար գնալու ժամանակ սա, մի քանի անգամ տեղեկանալուց յետոյ՝ արդեօք յետ նահանջումը լաւ են կատարում, երբ տեսել է, որ «տղերը» ամենքը կարգով դուրս են գնացել, ինքը, աչքը ծառայողներին կողմը գցած ու զէպի դուռը յետ-յետ գնալով, հասնելով չէմքին, ասել է՝ «մնաք բարով, պարոններ, կեցցէ՛ առաւ յեղափոխութիւնը» :

Կողպտողները դեռ չեն գտնուած, ու, երեւի, չեն էլ գտնուի, Գտնել է միայն Բուտիրկա կոչուած թաղում բանկի բանալին «Մ. Փ. Վ. Ը.» տառերով որ, սակայն իրեն աւելորդ բան ճանապարհին զէն եղել գցւած :

Հանուր նահանգապետի բնակարանը երեկանից պատնէշաւորւած է, ամեն տեղ քաղաքապահներ թիւը կրկնապակւած , փոստատունն էլ պահպանութեան տակ առած : Մինչեւ հիմա քաղաքապահները վերջին երկու ամիսները ընթացքում միայն զբոսն են հրացանով կանգնում, իսկ հիմա օրուգիշեր :

(ՍՐՇԱԼՈՅ)

ՇՐՋԱՐԵՐԱԿԱՆ



Պաշտօնակիցներ

Շատոնց ի վեր խնդրոյ տակ եղած է կազմել Պուրկարիոյ մէջ Ուսուցչական Միութիւն մը՝ նպատակ ունենալով ,

1. Իր իսկ ջանքերով ձեռք բերել ուսուցչէն անդգալիօրէն խլուած կարգ մը իրաւունքներ,

2. Ապահովել ուսուցիչներուն եւ ուսուցչուհիներուն ներկան ու ապագան,

3. Ինքնազարգացման միջոցներ հայթայթել ուսուցիչներուն ,

4. Վերակենդան ապկար ուսուցիչներուն պաշտօնավարութիւնը :

Տեղւոյս Ուսուցչ. Մարմինը՝ իր Ժող. Նիստին մէջ, օրակարգ ունենալով մուսուցչ. Միութեան ամենակարեւոր եւ կենսական հարցը, միաձայն հաւանութեամբ տուաւ հետեւեալ որոշումները

այս ազդեցութեամբ ձեռնարկը ի զուրհ հանելու համար դպրոցական նոր տարեւորջանէն առաջ .

1. Յուլիս ամսուան մէջ Ուսուցչ. Ընդ. Ժողով գումարել վառնա քաղաքը, «Պուրկարիոյ Հայ Ուսուցչ. Միութիւնը» կազմելու համար :

2. Հոն պատրաստել կանոնագիրը , նաեւ միօրինակ ծրագիր մը Պուրկարահայ վարժարաններուն համար,

3. Ուսուցիչները եւ ուսուցչուհիները պարտին անխտիր ներկայ գտնուիլ Ընդհ. Ժողովին՝ որու գումարման օրը պիտի ծանուցուի երկրորդ չրջաբերականով,

4. Ի նկատի ունենալով ուսուցիչներուն նիւթական վիճակը, անոնց ճամբու եւ ուրիշ անմիջական ծախքերը հայթայթելու համար՝ ամեն մէկ քաղաքի Ուսուցչ. Մարմինը պարտի այդ մասին միջոցներ գտնել, սարքելով ներկայացում, նուազահանգէս, վիճակահանութիւն եւ այլն ,

5. Ընդհանուր ծախքերէն աւելցած գումարը յատկացնել յառաջիկային կազմութեամբ Ուսուցչ. Միութեան սննտուկին :

Կը խնդրուի տեղւոյդ Ուսուցչ. Մարմինէն , որ բարեհաճ իր կարծիքն ու զիտողութիւնները յայտնել Ռուսչուքի Ուսուցչ. Մարմնոյն մինչեւ Ապրիլ 20, որպէսզի կարողանանք գործնական հողի վրայ դնել այս ազդեցութեամբ ձեռնարկը :

Թարգմանք

Ուսուցչ

Ատենադպիր

Մ. ՊԵՏՐՈՍԵԱՆ

Ատենապետ

Ս. ԱՊՈԶԱԵԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կալաց 25 մարտ 1906

... Տիար խմբագիր

Կալացի հայ գաղութը կը խնդրէ պատ. խմբագրութենէ՝ իւր ազգագուտ թերթին միջոցաւ թարգման հանդիսանալ մեր անհուն շնորհակալութեան եւ երախտագիտական անկեղծ զգացմանց առ Տիար Պէնլեան, որ իւր «Վէսէլ» անուն խումբով ամսոյս 23 ի հինգշաբթի գիշեր խիստ չքեղ եւ ամենայն յաջողութեամբ ներկայացուցած «Լէպլէպիճի Հօրօր Աղա» հոշակաւոր երեկոյթին առթիւ ներկայ եղող քաղաքապետի, հիւպատոսներու երեւելի եւ բարձրաստիճան անձանց ընդունելութեանց եւ գովեստներուն արժանանալուն համար :

Քաղաքիս Բարատօրութիւն թատերասրահը ընտրել եւ հոժ բազմութեամբ լեցուած էր, հակառակ գնբուն սովորականէն բարձր ըլլալուն շատերը տեղ եւ տոմսակ չկարենալով գտնալ ետ դարձան : Այս ապացոյց մըն էր թէ Կալացի թատերասեր հասարակութիւնը բաւական հետաքրքրուած էր ճ. Պէնլեանով որուն անունը շատ անգամ տեսնուած էր հայ թերթերու մէջ :

Պէտք է անմիջապէս խոստովանիլ թէ պ. խմբագիրը իւր լէպլէպիճիի գերով արդարացուց այդ հետաքրքրութիւնը, եւ կարելի է ըսել թէ իր շարժումներուն, իր ուսուցում ու դարձութիւններուն մէջ քննադատելի եւ թերի ոչինչ չը նշմարեցինք. այնպէս որ արուեստագէտի մը յատուկ հանգամանքները պարագային համեմատ ի հանդէս բերաւ. նաեւ օր. Ռօզալին, որ ծախարարութեան կրկնումներով քաջալերուեցան :

Վերջապէս մեր յարգելի խմբագիրը իւր խումբովը ըսել տուաւ սոյն հանգիստեաններու՝ որոնց մէջ կը գտնուէին թատերական խումբերու խմբագիտներ եւ անդամներ, թէ «կը գտնուի եղեր թուրքիոյ հայերու մէջ արհեստագէտներ , որ ցարգ մենք չէինք գիտեր . . . »

Ահա տիար խմբագիր ասի մեզ համար փառք ու պարծանք համարելով կը փութամք մեր անկեղծ շնորհակալիքը ձեր շնորհիւ հրապարակաւ յայտնել, քաջ գիտնալով ձեր ազգասիրական զգացմունքը չպիտի զլանաք անշուշտ լսել մեր խնդիրքը ու փափաքը, տեսնելով յառաջիկայ թերթերու մէջ :

Ընդունեցէք մեր սիրոյ եւ բարեկամական յարգանայ հաւատարմը :

Ձերգ

Դրիգոր Թախաբեկ

Եղարտ Կիլիկեան

Վ. Խանճեան

ՀԱՇՈՒԵԿՇԻՈՒ

Փետրուար 10/23 ին ի նպաստ տեղւոյս Ազգային Երկսեռ վարժարանաց տըրուած պարահանդէսին .



ՀԱՍՈՑԹ

	Ֆր. ք. ան.
Տոմարներէ գոյացեալ	1419. 10
Ծաղկեփունջերէ	815.
Պիւֆէէն Գոնֆէթիէ	863. 50
Այլ եւ այլէ	17. 60
Ֆր. ք. 3115. 60	

ԾԱԽԲ

	Ֆր. ք. ան.
Սալօնի վարձք	75.
Նուագածուաց	90.
Տիար Թի. Ֆէնկճեանի	80.
Գարեջուր	30.
Քոթիլոն	37.
Քօնֆիթի	26 40
Ծաղկեփունջ եւ նուէրներ	75. 30
Պիւֆէի ծախք	277. 85
Տպագրութեան	18.
Այլ եւ այլ ծախք	11. 05
Ֆր. ք. 720. 60	

Զուտ Հասոյթ Ֆրանք 2395.

Կնիք Հոգաբարձութեան)

1904 Մարտ 28

ՎԱՌՆԱ

ՍՐԱՀ 'ՍԱԼԵՏԻՆԷՆԻԷ'

Պատիւ ունինք ծանուցանել վառնայի արգոյ հասարակութեան, որ Զատ. կի երեկոյեայ տօներուն լաւ ժամանց մը ընծայելու համար, այս անգամ Պօլսէն հանրածանօթ կատակերգակ ձուգէրէ Սերվիօի խումբը հրաւիրեցինք, ներկայացնելու համար Ֆրանսերէն եւ Իտալերէն լեզուաւ խիստ զաւեշտանիկ Վօտվէրներ եւ կատակերգութիւններ : Կատակերգակ պ. Տէրիգօ վերջիս Պօլսոյ բեմին վրայ իր շունդալից համբաւովը, — կատակերգութեան ճիւղին մէջ Քօլլէնը յիշեցնելով — իրաւամբ ամբողջ մամլոյ գովեստին առաւելաւ եղաւ : Բացառաբար մի քանի ներկայացուցներ տալու մեր առաջարկնաւ ընդունելով, յուսով ենք որ վառնաի հասարակութիւնը այս բացառիկ առիթէն պիտի օգտուի :

Մտից տոմսակները այսօրուրէն կը վաճառուին Սրահ «Պուրկարիա» :

Դին ըէզէրվա 2 ֆր. Ա. կարգ 1,50 ֆր. Բ. կարգ 1 ֆր. .

Տնօրէնք

ՄԻՀՐԱՆ ԵՎ ՀՐԱՆՏ

